

ԿԵՆՍԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՉԱՓԱՆԻՇ

Կարապետյան Լ. Մ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

lil.mail.ru@mail.ru

Ներկայացման ամս. 21.07.2020

Գրախոսման ամս. 08.08.2020

Տպագրության ընդունման ամս. 19.08.2020

Սույն հոդվածում վերլուծվում են անձի կենսակայունության խնդրի տեսական հիմքերը՝ որպես անձի հոգեբանական անվտանգությունը ապահովող կարևոր չափանիշ: Կենսակայունության հայեցակարգը վերլուծված է տարբեր հոգեբանական մոտեցումների համատեքստում, առանձնացված են դրա հիմնավոր և մասնավոր բնորոշումները: Կենսակայունությունը հանդիսանում է անհրաժեշտ պայման մարդու հոգեբանական անվտանգությունը, ինչպես նաև կայունությունը պահպանելու համար, որով էլ արդիականանում է այդ ֆենոմենի ուսումնասիրումը արդի ժամանակներում: Կատարված տեսամեթոդոլոգիական վերլուծությունը թույլ է տալիս առաջարկել կենսակայունության հարցի ուսումնասիրման համատեքստում ներառել նաև անձի կայունության բաղադրիչները հիմնահարցի ավելի լիարժեք պատկեր ունենալու համար:

Հանգուցային բառեր՝ կենսակայունություն, կենսակայունության բաղադրիչներ, կայունություն, կայունության ասպեկտներ, հոգեբանական անվտանգություն:

Արդի ժամանակներում տեղի ունեցող քաղաքական, սոցիալական, տնտեսական իրավիճակները, աշխարհում տիրող անկայունությունը, տեղի ունեցող պատերազմական գործողությունները, կրկին առաջ են քաշում և արդիականացնում սթրեսային իրավիճակներին դիմակայելու, հոգեբանական անվտանգության և, առհասարակ, անձի կենսակայունության ուսումնասիրման հիմնահարցերը: Գործնականորեն այս ուսումնասիրությունը պայմանավորված է անձի կենսակայունության, ինչպես նաև կենսագործունեության մակարդակի բարձրացմամբ: Անձի կենսակայունության հիմնահարցի ուսումնասիրման հետ անմիջականորեն կապված և նույնպես չափազանց արդիական են անձի հոգեբանական անվտանգության, կայունության հիմնախնդիրը:

Հոգեբանական անվտանգություն հասկացությունը դիտարկելիս Ս. Ռոշինը և Վ. Սոսնինը փորձել են բնորոշումը տալ տարբեր բացատրական բառարաններում այդ հասկացության նշանակության դուրսբերմամբ և ուսումնասիրությամբ: Ընդհանուր առմամբ, հեղինակները նկատել են, որ տարբեր մշակույթներում

ծնավորվել է նմանատիպ պատկերացում, որով էլ անվտանգությունը բնութագրվում է ոչ միայն վտանգի բացակայությամբ, այլ նաև վստահության, հուսալիության զգացումով: Հոգեբանական անվտանգության զգացումը նպաստում է ապագայի հանդեպ վստահությանը, ապահովությանը և հուսալիությանը [3]:

Անձի հոգեբանական անվտանգության հասկացության կազմավորման մեջ իր յուրահատուկ դերն ունի էքզիստենցիալ-հումանիտար ուղղությունը (Ս. Մադդի, Կ. Ռոջերս, Վ. Ֆրանկլ և այլք): Տվյալ մոտեցումը հնարավորություն է տալիս խոսել անձի հոգեբանական անվտանգության մասին որպես մարդու՝ բազային անվտանգության պահանջմունքի բավարարմանը: Մեր վերլուծության համատեքստում շատ հետաքրքրական է Ա. Կոստինայի մոտեցումը: Անդրադառնալով հիմնահարցին՝ Ա. Կոստինայի կողմից կատարված վերլուծությունը առաջ է քաշում անձի հոգեբանական անվտանգության չորս հիմնական բաղադրիչներ: Մենք առանձնակի կարևորում ենք հետևյալ երկուսը՝

1. Անձի կայունությունը միջավայրում: Այստեղ մենք առանձնակի կարևորում ենք անձի ինքնահսկումը, սեփական հույզերի ղեկավարումը, ինչպես նաև սեփական ուժերի հանդեպ վստահությունը և ինքնագնահատականը:

2. Արտաքին և ներքին ազդեցությունների նկատմամբ կենսակայունության մակարդակը: Այստեղ անվտանգությունը հասկացվում է որպես անձի որակ, որն անձին պաշտպանում է իր ներքին ռեսուրսների հաշվին: Ա. Կոստինան հոգեբանական անվտանգության հարցի ուսումնասիրման ընթացքում ուշադրությունը կենտրոնացնում է կենսակայունության բաղադրիչների վրա, ըստ Ս. Մադդիի՝ հսկում, ներգրավվածություն և ռիսկի դիմում [8, էջ 135]:

Մենք լիարժեք կիսում ենք այդ տեսակետը և հիմնվում իր առաջարկած դրույթներին:

Մեր կողմից հոգեբանական անվտանգությունը վերլուծվում է անձի բարօրության, ինչպես նաև կայունության համատեքստում և դիտարկվում է որպես վիճակ, որը դժվարին իրավիճակներում հանդիսանում է մարդու կյանքի հուսալիության բանալին: Մենք կարծում ենք, որ հոգեբանական անվտանգությունն անքակտելիորեն կապված է անձի հոգեբանական կայունության և կենսակայունության հետ, ուստի կարևորվում է վերը նշված ֆենոմենների միասնական ուսումնասիրումը:

Անդրադառնալով կենսակայունության հիմնահարցին, նշենք, որ կենսակայունությունը անձի հոգեկան ոլորտի այն երևույթներից է, որը դժվարին իրավիճակում, մասնավորապես ներկայիս փոփոխական պայմանների առկայության դեպքում, հանդիսանում է անձի ամբողջականությունը պահպանող ռեսուրսներից մեկը, ուստի այն հայտնվում է հոգեբան հետազոտողների ուսումնասիրությունների կիզակետում:

Հոգեբանության դաշտում այն դարձել է գիտական հետազոտության առարկա 20-րդ դարում: Առաջին անգամ հնչել է «անխոցելի» տերմինը, որը հանգուցային էր կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին և

դեռահասներին բնութագրելիս: Հետագայում «անխոցելի» բառից անցում կատարվեց «կենսունակություն» տերմինին (*resilience*), քանզի «անխոցելի» տերմինն այդքան էլ չէր արդարացնում այդ երեխաներին և դեռահասներին բնութագրելիս: Նշենք, որ «կենսունակություն» տերմինին համընթաց գիտնականների կողմից առաջ քաշվեց «կենսակայունությունը»: «Կենսակայունություն»-ը (*hardiness*) առաջին անգամ հոգեբանության դաշտ ներմուծվել է Ս. Մադդի և Ս. Կոբասայի կողմից: Ըստ Ա. Լակտիոնովայի՝ այն ավելի լայն հասկացություն է, քան կենսունակությունը և ավելի ճիշտ է մեկնաբանում մարդու հոգեվիճակը կյանքի դժվարին պայմաններում [10]: Այստեղ կարելի է նկատել, որ առաջ քաշված տերմինները հիմնականում բնութագրող են հենց սթրեսային իրավիճակներում հայտնված մարդկանց՝ հատկապես դեռահասներին:

Մեր ուսումնասիրության համար ևս առանցքային հասկացություն է կենսակայունությունը, որը բնութագրում է սթրեսային իրավիճակներին դիմադրելու անձի ընդունակությունների չափը՝ պահպանելով ներքին հավասարակշռվածությունը և չնվազեցնելով գործունեության հաջողությունը [12, էջ 3]:

Կատարված տեսական վերլուծության շրջանակներում մենք հատկապես կարևորում ենք Ս. Մադդի և Ս. Կոբասայի մոտեցումը կենսակայունության հարցին համաձայն որի՝ կենսակայունություն հասկացության մեջ ներառված անձնային կառույցները կարող են նպաստել դրական աշխարհընկալմանը, կյանքի որակի բարձրացմանը, ինչպես նաև խոչընդոտներն ու սթրեսները վերափոխել զարգացման և աճի աղբյուրի: Դա այն ներքին ռեսուրսն է, որը նպաստում է ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական առողջության պահպանմանը: Կենսակայունությունը, որպես հոգեբանական երևույթ, իր մեջ է ընդգրկում է երեք բաղադրիչներ՝ ներգրավվածություն, հսկում, ռիսկի դիմում:

Ներգրավվածությունը (*commitment*) տեղի ունեցող իրադարձություններում անձի համար առավելագույն արժեքավոր և հետաքրքիր որևէ բան գտնելն է: Բարձր ներգրավվածության մակարդակ ունեցող մարդը ունենում է իր կենսագործունեությունից մեծ բավարարվածության զգացում: Ներգրավվածության բացակայությունը ծնում է օտարացման և լքվածության զգացում: Մարդն սկսում է իրեն զգալ «կյանքից դուրս»:

Հսկումը (*control*) ցույց է տալիս մարդու վստահությունը, որ նա ազդեցություն է ունենում արդյունքի վրա: Բարձր հսկման մակարդակ ունեցող մարդը դառնում է սեփական գործունեության, կյանքի ուղղու ստեղծողը [14]:

Ինչպես նշում է Դ. Յիրինգը՝ հսկում բաղադրիչի արտահայտվածությունը նպաստում է սեփական ակտիվ դիրքորոշման վրա: Բարձր հսկման մակարդակը տալիս է վստահություն հաջողության հասնելու գործընթացում և դրա շնորհիվ մարդը կարողանում է լուծել բարդ խնդիրներ՝ իր առաջ է դնում դժվարիասանելի նպատակներ: Դրա հետ մեկտեղ հսկման բացակայությունը ծնում է սեփական անձի անօգնականության զգացում, նման անձանց ավելի շատ բնորոշ է պասիվությունը [1, էջ 146]:

Անդրադառնալով տվյալ հետազոտությանը՝ ցանկանում ենք նշել, որ հսկման բաղադրիչը մարդուն դրդող է դեպի գործունեություն, որով էլ բերում է մարդուն որոշակի ակտիվության՝ նպաստելով նրա ինքնազարգացմանը և նոր հմտությունների տիրապետմանը: Վերոնշյալ տեսակետը հնարավորություն է ընձեռնում նոր հետազոտությունների իրականացմանը, որոնք դուրս են գալիս տվյալ ուսումնասիրության դաշտից :

Նշենք, որ որոշ հեղինակներ հսկումը կապում են մարդու ինքնագնահատականի, տագնապայնության և առողջական վիճակի հետ[2, էջ 153]:

Ռիսկի ընդունումը (challenge) բաղադրիչը բնութագրվում է իր հետ տեղի ունեցող իրադարձությունների ազդեցությամբ իր զարգացման վրա, անկախ դրանց բնույթից՝ դրական, թե բացասական: Մարդն իր կյանքի ուղին համարում է փորձի ձեռք բերման միջոց և գործելու ընդունակություն, նույնիսկ հաջողության բացակայության դեպքում:

Համաձայն Ս. Մադդիի՝ կենսակայունության այս երեք բաղադրիչներն ապահովում են քաջություն և դրդապատճառվածություն սթրեսային իրավիճակներում աճելու հնարավորություն տեսնելու, այլ ոչ թե բերում անձի քայքայմանը: Որպես այդպիսին՝ կենսակայունությունը ճանապարհ է դիմակայելու սթրեսին: Միայն մեկ կամ երկու բաղադրիչների առկայությունը չի կարող ապահովել անձի ամբողջականությունը: Անհրաժեշտ է ունենալ երեք բաղադրիչները միասին: Կենսակայունության բաղադրիչների բարձր մակարդակի առկայության դեպքում հեշտանում են կենսակայուն գործողությունները, որոնք ունենում են սոցիալական աջակցության կառուցողական արդյունք՝ օգտագործելով խնդիրը լուծելու ռազմավարություն և ունենալ արդյունավետ ինքնակառավարում: Այս տոկոսն գործընթացում սթրեսը և լարումը նվազում են, և հոգեկան առողջությունը ավելի շատ բարձրանում է, քան նվազում [14]:

Այս ոլորտի հայտնի հետազոտող Ս.Ա. Բոգոմազի և իր գործընկերների համատեղ հետազոտություններից ստացված տվյալները թույլ են տալիս ներկայացնել կենսակայունության առավել ընդհանուր բնութագրիչները, համաձայն որոնց՝ կենսակայուն անձը ունի բավարարվածություն իր կյանքից, որը բարձր է վերաբնաստավորում, որպես կանոն ցուցաբերում է ակտիվության և նպատակաուղղվածության բարձր մակարդակ, որին բնորոշ է բարձր հուզական ինտելեկտը: Կենսակայուն անձը ունակ է տիրապետել ստեղծված իրավիճակն իր օգտին: Հարկ է նշել, որ անձի կենսակայունությունը կյանքի սովորական պայմաններում թաքնված է ուշադրությունից, սակայն սթրեսային իրավիճակում այն ի հայտ է գալիս[11]: Մենք լիովին կիսում ենք այս տեսակետը և հիմնվում վերը նշվածին:

Մ. Լոգինովան դիտարկում է կենսակայունությունը որպես արտաքին միջավայրի բացասական ազդակներին դիմակայելու ինտեգրալ բնութագրիչ, որն օգնում է հաղթահարել կյանքի դժվարությունները, նպաստում սուբյեկտի զարգացմանը: Այս ամենից ելնելով հեղինակը նշում է, որ կենսակայունությունը որպես

համոզմունքների համակարգ նպաստում է սուբյեկտի պատրաստ լինելուն մասնակցել, հսկել և ղեկավարել էքստրեմալ իրավիճակները, ընկալել բացասական իրադարձությունները որպես փորձ և բարեհաջող հաղթահարել դրանք: [13]:

Համաձայն Է. Վերների, այն անձինք, որոնք ունեն կենսակայունության բարձր մակարդակ, ավելի ակտիվ են ներգրավված փոխհամագործունեությանը այլ մարդկանց հետ, նրանց մոտ առկա է շփվողականության բարձր մակարդակ և ունեն լավ հմտություններ խնդիրներ լուծելիս: Կենսակայունության բարձր մակարդակը թույլ է տալիս մարդկանց հավատալ, որ իրենց սեփական գործողությունները դրական դեր են խաղում իրենց իսկ կյանքում [15]: Արժևորելով վերոնշյալ հետազոտությունը՝ դրա մեծ կշիռը հոգեբանության դաշտում, այնուամենայնիվ, ցանկանում ենք նշել, որ շփվողականության բարձր մակարդակը չի կարող լինել առաջնային պայման անձի կենսակայունության համար: Կա նաև մեծ հավանականություն, որ հայտնվելով դժվարին իրավիճակում մարդը, լինելով ներամփոփ, բարձրացնում է շփման ակտիվությունը: Ուստի վերոնշյալ հետազոտության տվյալները կարող են լինել հարաբերական և հաստատված տարբեր գործոնների ներքո:

Ս. Խանգը, նշում է, որ բարձր կենսակայունություն ունեցող մարդիկ ունեն ավելի մեծ հավանականություն տեղի ունեցող փոփոխությունների ընթացքում մնալ առողջ և կյանքում տեղի ունեցող իրադարձությունները ընդունել որպես դրական: Մեկ այլ հետազոտության արդյունքները վկայում են, որ կենսակայունությունը ազդում է տիրապետման ռեսուրսների վրա՝ բարձրացնելով ինքնաարդյունավետությունը: Բարձր կենսակայունություն ունեցող անձինք ունեն ավելի բարձր կոգնիտիվ գնահատական և զարգացած տիրապետման ռազմավարություններ [5]:

Հարկ ենք համարում նշել, որ ինչպես արևմտյան, այնպես էլ ռուսական հոգեբանության մեջ կենսակայունությունը դիտարկվում է որպես մարդու ձգտում կատարելության, վարքի ինքնադետերմինացիայի, ինքնաակտուալիզացիայի, սոցիալական համագործակցության: Կենսակայունությունը պատկանում է ունակությունների հատուկ դասին, որն անվանում են «հոգևոր»: Դժվարին իրավիճակում լինելիս սուբյեկտը իր ակտիվությունը ուղղում է ինչպես արտաքին իրավիճակի, այնպես էլ իրեն փոփոխելու վրա [7]:

Այսպիսով՝ հիմնվելով մի շարք հեղինակների կարծիքների վրա (Ա. Կոստինա, Ս. Մադրի, Դ. Ցիրինգ, Ա. Բոգոմազ), կարելի է նկատել, որ ինչպես հոգեբանական անվտանգությունը, այնպես էլ անձի կայունությունը բնութագրվում է ինքնահսկմամբ, հույզերի ղեկավարմամբ, սեփական ուժերի հանդեպ վստահությամբ, ինքագնահատականով և ակտիվության մակարդակով: Այստեղ կարելի է նկատել, որ եզրույթները բնութագրվում են մեծամասամբ որպես բացասական ազդակներին դիմակայելու, անձին պաշտպանելու տեսանկյունից՝ անտեսելով այն հանգամանքը, որ կենսակայունությունը կարող է կառուցողական կերպ լուծել խնդիրը՝ նպաստելով անձի ռեսուրսների համախմբմանը,

մասնավորապես նոր որակների, հնարավորությունների և գծերի բացահայտմանը, որն էլ կնպաստի անձի ինքնաճանաչմանը:

Կենսակայունության հիմնահարցի ուսումնասիրման պահանջարկը օր օրի մեծանում է, իհարկե, կան բավական թվով ուսումնասիրություններ, նոր մոտեցումներ և գաղափարներ նվիրված այդ հարցին, սակայն դեռևս չկա լիարժեք և ամբողջական պատասխան անձի կենսակայունության հիմնահարցի վերաբերյալ:

Ուստի մեր կատարված ուսումնասիրությունը կենսակայունության հարցի շուրջ ներառել է նաև անձի հոգեբանական կայունության ֆենոմենը: Մենք այս հարցը հատկապես կարևոր ենք գտնում, քանի որ կարծում ենք, որ կենսակայուն անձին անհրաժեշտ է նաև հոգեբանական կայունության մակարդակ, հետևաբար կարևորում ենք վերը նշված հասկացությունների միասնական ուսումնասիրումը:

Գիտնականների կողմից հոգեբանական կայունությունը դիտվում է որպես բարդ, ինտեգրատիվ անձնային որակ, որը բնութագրվում է հուզական, կամային, բարոյական, ինտելլեկտուալ բաղադրիչների համադրությամբ: Կայունության հարցի ուսումնասիրմամբ զբաղվում են շատ գիտնականներ, որոնք դիտարկում են խնդրի տարբեր ասպեկտները (հուզական կայունություն՝ Պ. Զիլբերման, Վ. Մարիշյուկ, բարոյական կայունություն՝ Վ. Չուլնովսկի, վարքային կայունություն Լ. Բոժովիչ և այլք): Անձի հոգեբանական կայունությունը թույլ է տալիս կանխարգելել արտաքին և ներքին բացասական ազդեցությունները: Այդ ունակության բացակայության դեպքում անձը դիտվում է հոգեբանորեն անկայուն [4]:

Հարկ է նշել, հոգեկան կայունությունը որոշում է անհատի կենսունակությունը, հոգեկան և սոմատիկ ամբողջությունը, պաշտպանում է անձին դեգրանտեգրացիայից և անձնային խանգարումներից [6, էջ 463]:

Հոգեբանական կայունության հարցին անդրադառնալիս՝ մենք կարևորում ենք Լ. Կուլիկովի այն մոտեցումը համաձայն, որի, կայունությունը թույլ է տալիս անձին դիմակայել կյանքի դժվարին իրավիճակներում հայտնվելիս՝ պահպանելով առողջությունը և աշխատունակությունը: Հոգեբանական կայունությունը անձի որակ է, որի առանձին ասպեկտներն են ստաբիլությունը, հավասարակշռվածությունը և դիմացկունությունը:

Ստաբիլությունը արտահայտվում է դժվարությունները հաղթահարելու ունակությամբ, իր ուժերի նկատմամբ հավատի պահպանմամբ, սեփական ուժերում վստահությամբ: Այն դրսևորվում է նաև տրամադրության և ակտիվության մակարդակի պահպանմամբ: Ստաբիլության մակարդակի նվազումը խնդրների հաղթահարելու ընթացքում վնասում է անձի սոմատիկ և հոգեկան առողջությանը:

Հավասարակշռվածությունը արտահայտվում է առաջացած լարվածությունը և իր հոգեկանի ռեսուրսների պաշարը համեմատելու ունակությամբ: Հարկ է նշել, որ լարվածության մակարդակը պայմանավորված է ոչ միայն սթրեսային,

արտաքին պայմաններով, այլ նաև դրանց սուբյեկտիվ գնահատականով: Որպես կայունության ասպեկտ՝ այն արտահայտվում է բացասական ազդեցությունը նվազեցնելու ունակությամբ: Հավասարակշռվածությունը թույլ է տալիս մարդուն խուսափել ծայրահեղությունից, կառուցել սեփական կյանքի ուղին և իրականացնել իր առջև դրված նպատակները: Դիմադրությունը բնութագրվում է որպես ունակություն պայքարելու վարքի, ընտրության և կյանքի ոճի ընտրության ազատության սահմանափակումների հարցում [9, էջ 88-92]:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս կենսակայունությունը դիտարկել որպես անձի կարևոր բնութագրերից մեկը, որը նպաստում է ինչպես սեփական անձի, այնպես էլ շրջապատի հետ ներդաշնակության մեջ լինելուն, անձին տալիս է հնարավորություն յուրովի մոտենալ դժվարություններին, նպաստում է առաջ եկող լարվածության մակարդակի իջեցմանը, որոնք առաջանում են կյանքի տարբեր փուլերում և տարբեր գործոններից, իրավիճակներից: Մարդը, ակտիվորեն մասնակցելով խնդրի լուծմանը, կարող է իր ուժերը համախմբել, պահպանել անձի կայուն վիճակը, հավասարակշռվածությունը, բարեհաջող հաղթահարել այն:

Կենսակայունությունը նպաստում է անձի հոգեբանորեն պաշտպանված լինելուն, նպաստում է հոգեբանական անվտանգության զգացմանը, ուժ է տալիս անձին դժվարությունների հաղթահարման գործընթացում, արդյունավետ կենսագործունեության, ինչպես նաև նոր գաղափարների իրագործման հարցում:

Չնայած տվյալ ոլորտի բազմաթիվ ուսումնասիրությունների առկայությանը՝ [1],[2],[5],[14],[15] մենք չենք հանդիպել այնպիսի ուսումնասիրության, որտեղ նշվում է կենսակայունության և կայունության ասպեկտների միասնական ուսումնասիրման մասին: Ուստի տեսնում ենք նոր ուսումնասիրությունների անհրաժեշտություն, որոնք առավել կհարստացնեն, կընդլայնեն կենսակայունության հայեցակարգի մասին պատկերացումները:

Կարևորելով դժվարին իրավիճակներում անձի կայունության գաղափարը, կարծում ենք, որ կենսակայունության բաղադրիչների և կայունության ասպեկտների միասնական ուսումնասիրումը կարող է նպաստել կենսակայունության հարցի շուրջ նոր մոտեցմանը և դառնալ սկզբնաղբյուր կենսակայուն անձի առավել լիարժեք նկարագրության, անձի կյանքի որակի, կենսագործունեության բարձրացմանը, անձի ամբողջականությանը նպաստելու համար:

Գրականություն

1. **Волобуева Н.М.** Жизнестойкость как ресурс современного руководителя. Науковий вісник Полтавського університету економіки і торгівлі. № 1 (56), 2013, с. 144-147.

http://nbuv.gov.ua/UJRN/Nvpush_2013_1_31, Այց՝ 13.07.2020.

2. **Волобуева Н.М., Сержко Т.А.** Жизнестойкость и религиозность как ресурсы современного человека в трудных жизненных ситуациях. Научные ведомости БелГУ. Серия Гуманитарные науки. 2015. № 24 (221), Выпуск 28, с. 153
3. **Грачев Г.В.** Личность и общество: информационно-психологическая безопасность и психологическая защита. Москва, Изд. : ПЕР СЭ, 2003, 303 с.
<http://bookap.info/psywar/grachev/gl6.shtm> , шжг` 09.07.2020:
4. **Дарвиш О.Б.** Обеспечение психологической устойчивости личности как открытой самоорганизующейся системы // Известия Алтайского государственного университета. 2011. № 2, с. 47-50.
5. **Евтушенко Е.А.** Жизнестойкость личности как психологический феномен // Личность, семья и общество: вопросы педагогики и психологии, Новосибирск, сибак. 2016, с. 72-77.
6. **Ермакова. П.Н., Лабунская В.А.** Психология личности. Учебное пособие. М.: Эскмо, 2007, 653 с.
7. **Конюхова. Т.В., Конюхова Е.Т.** Жизнестойкость личности как особый паттерн установок освоения социокультурного пространства. Известия Томского политехнического университета. 2013, т. 322. № 6, с. 110-114.
8. **Костина Л.М.** Психологическая модель формирования психологической безопасности личности обучающихся в адаптационный период // Учёные записки Санкт-Петербургского государственного института психологии и социальной работы. 2019. Том 32. № 2. С. 138–144.
https://psyjournals.ru/scientific_notes/2019/n2/Kostina.shtml, шжг` 26.06.2020
9. **Куликов Л.В.** Психогигиена личности. Питер 2004, 464 с .
10. **Лактионова А.И.** «Жизнеспособность» в структуре психологических понятий./Вестник Московского государственного областного университета. Серия. Психологические науки. 2010, № 3, с. 11-15.
11. **Лапкина Е.В.** Совладающее поведение, жизнестойкость и жизнеспособность личности: связь понятий, функций. Вестник КГУ им. Н.А. НЕКРАСОВА. 2015, том 21, № 4, с. 130-133.
12. **Леонтьев Д. А., Рассказова Е. И:** Тест жизнестойкости, Москва: Смысл, 2006, 63 с.
13. **Логинова М.В.** Жизнестойкость как внутренний ключевой ресурс личности // Вестник Московского университета МВД России. 2009, № 6, с. 19–22.
14. **SALVATORE R. MADDI.** Hardiness: The courage to grow from stresses. University of California, Irvine, USA, The Journal of Positive Psychology, July 2006; 1(3): pp. 160–168.
15. **Werner E.** Resilience in development // Current direction in psychological science. 1995. Vol. 4. pp. 81-85.

ЖИЗНЕСТОЙКОСТЬ КАК ВАЖНЫЙ КРИТЕРИЙ ОБЕСПЕЧЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ ЛИЧНОСТИ

Карапетян Л. М. (ЕГУ, Ереван, Армения)

В статье анализируются теоретические основы изучения проблемы жизнестойкости как важного критерия обеспечения психологической безопасности личности. В статье рассматриваются вопросы жизнестойкости, психологической безопасности и устойчивости личности. Концепции жизнестойкости проанализированы в контексте различных психологических подходов, выделены ее фундаментальные и частные определения. Жизнестойкость – необходимое условие для сохранения психологической безопасности и устойчивости личности, связи с чем и актуализируется необходимость изучения этого феномена в современных условиях. На основе проведенного теоретико-методологического анализа предлагается включить аспекты устойчивости личности в контекст изучения вопроса жизнестойкости.

Ключевые слова: *жизнестойкость, компоненты жизнестойкости, устойчивость, аспекты устойчивости, психологическая безопасность*

HARDINESS AS AN IMPORTANT CRITERION FOR ENSURING THE PERSONALITY PSYCHOLOGICAL SECURITY

Karapetyan L. M. (YSU, Yerevan, Armenia)

Theoretical aspects of personality hardiness are analyzed in this article as an important criterion for ensuring psychological security. The article touches upon issues of hardiness, psychological security and stability. The concepts of hardiness are analyzed in the context of various psychological approaches, where its fundamental and particular definitions are singled out. The hardiness is an essential condition for ensuring psychological security and stability, thus the need for studying this phenomenon in modern conditions gets more actualized. On the basis of the theoretical-methodological analysis, it is proposed to include the component of the stability in the context of studying the issue of hardiness.

Keywords: *hardiness, hardy attitudes, stability, aspects of personality stability, psychological security.*